


ՏՄԵՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւարանչուր բառին 2 կոպեկ.

ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Յայտնում է ի գիտութիւն ընկերութեան պ.պ. անդամների, որ կիրակի, փետրվարի 24-ին, առաւօտեան 10 ժամին, քաղաքային Կոմսայի դահլիճում նշանակված է.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

- Գնելու և հաստատելու համար.
- 1) Վարչութեան հաշիւը 1890 թվի համար.
 - 2) Վարչութեան վերաբերյալ ծախսերի նախահաշիւը 1891 թվի համար.
 - 3) Եւամուայ ապահովագրութիւնների համար 5% պակասացում (СНИЖКА) որոշելու վերաբերյալ առաջարկութիւնը.
 - 4) Հաւատարմագրութիւնների վերաբերյալ կանոնների նախագիծը ընդհանուր ժողովներում մասնակցութիւն համար:
 - 5) Եւ նոյնպէս ընտրութիւններ կատարելու վերահսկող Մասնաժողովի երկու անդամների, Վարչութեան մէջ անդամի, վերաբերյալ յանձնաժողովի երկու անդամների, ծառայութեան ժամանակահատիցը լրացրած և վիճակով դուրս եկողների տեղ և մէկ մէկ կանդիդատ ընտրել նրանցից իւրաքանչիւրի համար:
 - 6) Ընկերութեան այն անդամները, որոնք միջոց չունեն մասնակցել ընդհանուր ժողովին, կարող են իրանց ձայնի իրաւունքը տալ ուրիշ անձանց հաւատարմագրով, որի վրա եղած ստորագրութիւնը պէտք է վաւերացվի վարչութիւնից կամ ընդհանուր կարգով պէտք է լինի: Մի անբաժան կառուած չէ ձեռքի, նոյնպէս կառավարչական և հասարակական հիմնարկութիւններին իրաւունք է տրվում մասնակցել ժողովին իրանց լիազօրեւոր միջոցով:
 - 7) Հաւատարմագրերը պէտք է ներկայացվեն Վարչութեանը Ընդհանուր ժողովի նախընթաց օրը, որը ցերեկվայ 12 ժամից:
 - 8) Կրտսեր դահլիճի մուտքը վերաբերում է փողոցին է:

1—1

ԿԱՐԿՈՒՄԻ ԴԵՄ

ՅԱՆՔԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄՍՍԿՎԱՅՈՒՄ

Ընկերութեան վարչութիւնը յայտնում է ԽԱՂՈՂԻ ԱՅԳՆԵՐԻ, ՊՏԱՍՈՒ ՇԱՌԵՐԻ, ԱՅԳՆԵՐԻ, ԺԻՄԻՍԻ, ԳԱՅՐԵՐԻ, ԲԱՐՏԻՍԻ և այլ պլանտացիաների պ.պ. տերերին, որ 1890 թվին, համաձայն ընկերութեան կանոնադրութեան 30-րդ և 33-րդ յօդուածների, ընկերութեան վարչութիւնին ունի բանալ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԵՒ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ: Վարչութիւնը յայտնում է պլանտացիաների ԿԱՐԿՈՒՄԻ ԴԵՄ և որ յայտարարութիւններն այդ օրը ընդունում են ցանկացողներից ԹԻՖԼԻՍԻՄ և Ա. Ալեքսանդրով-Իւնչի, իսկ ՎԱՍԻԿԱՎԱՍԻՍԻՄ Գ. Ս. Ալեքսանդրով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ներկայացվում են առանձին ԲԱՆԿԱՆԵՐԻ վրա, որոնք ունենում են վերոյիշեալ անձանց նրանց պահանջման համեմատ: Նոյն գործակալներից որոնք է ստանալ տեղեկութիւններ այն բոլոր հարցերի մասին, որոնք վերաբերվում են պահանջարկների գործին:

ԿԱՐԿՈՒՄԻ ԴԵՄ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընկերութեան հաւատարմատար ԹԻՖԼԻՍԻՄ և Ա. Ալեքսանդրով-Իւնչիին անվաճառ կարելի է տեսնել «Новое Обозрение» լրագրի խմբագրատանը ժամը 2-ից մինչև 3 ժամը ցերեկայ:

2—2 (Ե.)

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Ախալ կարծիք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գ. Զ. Լիւնի. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՍԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կրկնութիւնների թիւը քաջապատանից. Արտա- լուրեր.—ԽԱՂՈՂԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳՐՈՒՆԵՐ.— ՊՏԱՍՈՒ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՍԻՄ. Համեմատութիւն Ախալցխայի անցեալ կեն- յարկութեան ներկայի հետ:

ՄԵԱՆ ԿԱՐԴԻՔ

Մոսկույում հրատարակվող «МОСКОВС. ВѢС.» լրագրի նորերում մի շատ տար- ղնակ յօդուած է տպել հայերի մասին: Եւ արդար ու բարակ խօսել այդ սխալ և ան- ճիշտ յօդուածի մասին իսկապէս չարժէ, քանի որ յայնքան կանք, որ ռուս լրագրի մէջ «կեղծանուն գործը մեղադրում են Վերկովկասեան հայերին առանձնա- յայնքան (սեպարատիստ) ձգտումներն ունենա- ռը և բացի սրանից հաւատացնում է մեզ, որ հայերը ջանում են նոյն ուղղութեամբ շարժուիլ և վրացիներին ու մահմեդական- ներին դիմադրել:

Միմյանի «Новое Обозрение» լրագրի խմբագրից պ. Նիկոլաձէ, այդ լրագրի 17 համարին համարում, շատ խելացի կերպով է պատասխանում Մոսկույի լրագրի յօ- յուածագրին, շատ արարող կերպով մատ- ցանքներ անելով և գրողի յայտնված քաղաքի մէջ պատահող հակասութիւն- ների վրա: Եւ իրաւ, պ. Չիլդիս-Խան իր կողմից մեղադրում է հայերին սեպա- տիստական ձգտումներն ունենալու, իսկ իր կողմից ասում է, որ հայերն առհա-

տարակ գործնական, հաշուող ամեն բանում իրանց շահը որոնող ազգութիւն են: Եթէ այդպէս է, նկատում է շատ իրաւացի կեր- պով «Нов. Обозр.» լրագրի յօդուածագրի- լը, ուրեմն հայերը, գործնական, հաշուող իրանց շահը որոնող ազգութիւն լինելով, չեն էլ կարող սեպարատիստական միտում- ներ ունենալ, քանի որ այդ տեսակ միտում- ներն ամենեւին ձեռնառու և շահաւէտ չեն կարող լինել իրանց համար: Զը մուսանեք, աւելացնում է պ. Նիկոլաձէ, որ Վովկասեան և Անդրկովկասեան երկրի այն մասերը, որ- րոնք բնակեցրած են հայերով և վրացիներ- րով, ամենեւին նուաճված չեն եղել Ռուսաստանի կողմից, այլ հայերն ու վրա- ցիք իրանք կանչեցին ռուսներին դէպի ի- լանց երկրը, զորեղ պաշտպանութիւն ու- նենալու համար մահմեդական տարրի դէմ: Եւ իրաւ, Ռուսաստանը մեր երկրները մուտք գործելու օրից, մեր երկրում իր տիրապե- տութեան ամբողջ ընթացքում կռիւ էր մը- ջում միմյանի թիւքը, պարսիկ և լեւոնա- նակ տարրերի դէմ, և երբեք կռիւ չէ մղել այդ երկրի քրիստոնեայ տարրերի դէմ, որոնք ռուս առաջին զինուորի երկաւուր- պէից արդէն հանդէս եկան, եթէ այդպէս կարելի է ասել, որպէս ռուսաց ոյժի դաշ- նակիցներ: Ուրեմն հարկ էլ չը կար նուա- ձել այն ժողովուրդները, որոնք իրանք ի- լանց կամքով կանչեցին ռուսներին:

Տեղական քրիստոնեայ տարրերի այդ հա- մակրութիւնը, այդ հաւատարմութիւնը դէպի ռուսները, նրանց դաշնակից լինելը ռուսներին հետ շարունակվեց և շարունակ- վում է Պետրոս մեծի ժամանակներից ընկ- սած մինչև մեր օրերը: Հայը և վրացին ընտելացել են նայել ռուսներին վրա, որ-

պէս մի ոյժի վրա, որի պատմական կոչումն է պաշտպան հանդիսանալու քրիստոնեայ տարրի, ընդդէմ մահմեդական տիրապետու- թեան, և այդ պատճառով ոչինչ միջոցնե- րով ոյժով թէ համակրելով, դաշնակցով թէ խօսքերով անհնարին է ոչնչացնել հա- յի և վրացու զինում ամենախոր արմատ- ներ դգած այն համոզմունքը, թէ Ռուսաս- տանը չէ կարող չը համակրել քրիստոնեայ տարրի ինքնուրոյն զարգացմանն ու մահ- մեդական ազդեցութիւնից ազատվելուն:

Եւ այդ համոզմունքը, այդ հաւատը դա- ւանում է մեր երկրի ամբողջ քրիստոնեայ տարրը, հայ և վրացի գիւղացուց սկսած, մինչև հայ հայրաւոր զրամատերը և վրա- ցի յաջնակները:

Այդ համոզմունքը, որ Ռուսաստանի պատմական կոչումն է քրիստոնեաներին օգնել, այնքան խոր արմատներ է գցել հայերի ու վրացիների մէջ, որ նոյն իսկ այն ժամանակ, 70-ական թվականներում, երբ ռուսաց տարրը օգնութեան ձեռք էր մեկնում նեղն ընկած հերցեգովինցիներին և բոսնիացիներին, մեր երկրի հայերն ու վրացիք անասելի ոգևորութեամբ և յա- վառակութեամբ, թէ բարոյապէս և թէ առատ դրամով օգնում էին այդ քրիստո- նեայ ազգութիւններին, չընայելով որ նրանք ոչ զեղով ու լեզուով ազգակից են իրանց, ոչ էլ հարեանութիւն ունեն իրանց հետ, այլ հեռու, շատ հեռու են գտնվում մեր երկրից, մեզանից շատերի, աւելի տեղաների, մեր ամբոյնի համար ապրում են մի այլայտ աշ- խարհում... Բայց բաւական է, որ նրանք քրիստոնեաներ լինեալ...

«Н» իրաւունքով ասում է «Новое Обозрѣн.» լրագրի յօդուածագիրը, Մոսկ- վայի լրագիրը կասկածում է հայերին, որ նրանք զուրկ են երակտագիտական զգաց- մունքից դէպի Ռուսաստանը, որ նրանք նոյն իսկ ճիշդ հաշիւը և գործնական շա- հիւրը չըմբռնելով, չեն հասկանում Ռուսաս- տանի հետ համեմաշխ լինելու օգուտը: Զէ՛ որ հայերը փոքրիկ երեխաներ չեն, նրանք հօ՛ չեն կարող մուսանալ իրանց հայրենիքի իրական օգուտը և նրա դիրքը Ռուսաստանի, Պարսկաստանի և Թիւրքիայի մէջտեղ. և միթէ նրանք այնքան անկող ու անհեռատես են, որ Ռուսաստանի հետ ու- նեցած իրանց համեմաշխութիւնից հրա- ժարվելով, նեցուկ կը որոնեն մահմեդական աշխարհի մէջ, որը բնականապէս թշնամի է իրանց»:

Եւ քանի որ հայերի դիրքը երեք վերոյի- շեալ պետութիւնների մէջ չէ փոխվել (և հաշիւ թէ կը փոխվի), մինչև այդ ժամա- նակ, շարունակում է Թիֆլիսի ռուս լրա- գրի յօդուածագիրը, հայերը միշտ կը ձգտեն, ինչպէս և միշտ ձգտել են դէպի Ռուսաստանը, թէ կող իրարմի աւերակ- ների վրա հաստատվել էլ անկախ հայոց թաղաւորութիւն:

Վերջացնելով մեր յօդուածը, մենք «Но- вое Обозрѣн.» յօդուածագրի հետ միասին, թիւյ կը տանք մեզ մի խորհուրդ տալ մայրաքաղաքի ռուս լրագիրներին՝ զգոյշ լինել և չը սերմանել երկպառակութիւն մի և նոյն երկրի այլ և այլ ցեղերին պատկա- նող քաղաքացիների մէջ, անաղակաբար չը սերմանել տիրապետող տարրի սրտում ան- հիմն կասկածանքներ հայտաւ Ժողովուրդ- ների հակումներին և արամադրութեան վե- րաբերմամբ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գ. Զ. ԵԼԻՍԵՅԷՎ

Պետերբուրգում մօտ օրես վախճանվեց Գրի- գոր Զաք. Ելիսեյի: Իր գրականական երկար գոր-

ծունելութեան ընթացքում, որը շարունակվեց աւելի քան 30 տարի, նա իր իսկական անունով երբեք երևան չէր գալիս, նա կամ բոլորովին ստորա- գրութիւն չէր դնում իր յօդուածների տակ, կամ գրում էր Грѣшѣко կեղծ անունով: 1858 թը- ւականից մինչև 1881 թիւը նա ամենաանհղուն կերպով աշխատակցում էր այդ ժամանակներում ա- մենատարածված հրատարակութիւններին՝ «Совре- менникъ»-ին և «Отечествен. Записки»-ին, թէ իբրեւ հրապարակադիր և թէ իբրեւ մշտական և ազդեցիկ անդամ այս խմբագրութիւնների: Աշխա- տակցելով «Совр.»-ին, նա մի և նոյն ժամանակ միջոց էր գտնում գրել և «Искра»-ի մէջ և խմբ- բարդել «Вѣкъ» լրագիրը և յետոյ «Очерки»:

Ելիսեյի գրվածները ծանօթ էին հասարա- կութեանը ոչ թէ միայն նրա համար, որ նը- րանք անդադար ապագրվում էին ամենատարած- ված լրագիրներում, այլ և նրա համար, որ սրանք զրոյմված էին վերին աստիճանի բարձր գրականական արժանաւորութիւններով. նրանց մէջ փայլում էր արտակարգ խելք, բարձր գրա- կանական ոյժ, կենսի մօտիկ ծանօթութիւն, հա- ժողմունքների և հայեացքների հաստատութիւն և այլն: Ելիսեյ նա ծանօթ չէր իր անձնաւորու- թեամբ հասարակութեանը, դրա փոխարէն ծանօթ էր նա բոլոր գրողներին չըջանում, որոնք բոլորն էլ նրան յարգում էին և չափազանց գնահատում: Նա ծնված էր Սիբիրում և ուսումն աւարտած Մոսկ- վայի հոգևոր ձեռնարանում (նա քահանայի որդի էր):

Անելով վերոյիշեալ խորհրդածութիւնները, Նի- ցեալ Ելիսեյի հետ միասին կրում-քաշում էր «Отечеств. Записки»-ի խմբագրութեան ծանր լուծը, «Русск. Вѣд.» լրագրում ապագրած իր յօ- դուածի մէջ աւելացնում է և հետեւեալը. «Նա հի- մա թաղում եմ «Отеч. Зап.» ամագրի երրորդ դեկավարին. առաջինը Նիկրասովն էր, երկրորդը Շչեդրին, երրորդը Ելիսեյ: Եւ իւրաքանչիւրը դրանցից զարթնցնում է իմ մէջ ամեն անգամ իմ կենսի ամենալաւ յիշողութիւնները և ամեն ան- գամ կարծես ես թաղում եմ դրանց հետ իմ դո- յութեանս մի մի մասնիկը: Ես բոլորին կառա- ջարկելի կարգաւ և նորից կարգաւ Ելիսեյի յօ- դուածները, առանց ըստ մի կողմ թողնելու նրա «նեքին տեսութիւնները», որոնց մէջ, ըստ ե- րևոյթի, հարեանցի էր խօսվում կենսի ընթա- թացիկ երևոյթները մասին: Ելիսեյի գրուած- ները և մինչև այժմ պահպանում են իրանց նը- շանակութիւնը, չնորսով այն հիմնական տեսակե- տի, որն անցնում էր նրանց միջով»:

Այդ հիմնական տեսակետը, որն անցնում էր կենսի ամենաբազմառեսակ երևոյթների միջով, ահագին նշանակութիւն է ստանում, քանի որ այդ կենսի երևոյթները միշտ և միշտ կրկնվում են մեր մէջ, թէ և գուցէ նոր և նոր պարագաներում: Այդպիսի յուսալի դեկավարի հետ անցկենալ կենսի գնապաւն երևոյթներով, որն երբեք չէր չնդվում իր նախագծած շաղկի, օգտակար է ընդհանրապէս, մասնաւոր տատանվող մտքերի համար, որոնք թիւն այժմ այնքան էլ քիչ չէ: Ե- լիսեյի գրուածներին հրատարակութիւնը ռուսաց գրականութեան համար կը կազմի մի մեծ հարս- տութիւն: Նրա գրուածները կարող են կազմել մի քանի հատորներ:

Նրա թաղման հանդէսը, որը տեղի ունեցաւ Պետերբուրգում, Վճիւղի գերեմանատանը, յուն- վարի 21-ին, 1891 թ., շատ էլ չքով չը կա- տարվեց. չափազանց տաճմամտիակ էր պատկնե- րի թիւը, իսկ դամբանականներ ոչ զք չասեց:

Ղ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք լսում ենք, որ ԿԱՐՍԻ չըջանում, հայոց գիւղերի մէջ, դիւղական-վարչական անդամներն արդէն նշանակված են յոյներից և մօլդովներից:

հնք տեսնում այժմս։
 Կապցիկացի կինը այժմս էլ օրինակելի է իր
 ատասկիլու՝ խան մէջ. նա, հիւսն էլ ինքն է
 ան կերակուրը պատրաստում, լուսացք ա-
 հաց թխում, իր երկխայնի ժնուցանում,
 և կարակտում, կով կիծում, տուն, դուռ մաք-
 ւ այն, սակայն ազատ միջոցներով ոչ թէ
 մի ճախարակով, ուստայնով, սանդղերբով, ի-
 բրով է զբաղւում, այլ նուրբ հիւսուածքով
 նազդով, որի արդիւնքը դործագլուխում է ա-
 ղեց ազնադարդերի համար։ Նա այժմ մասամբ
 էլ է մօղայի հետեւը, մօղաները ոչ թէ
 իկի դարձացման վրա են հիմնւած, այլ նմա-
 յան թեման։ Մէկը իր ճակատի վարդի վրա

Թագուհու ներկայութեամբ, ծովն իջնցրին «Royal» և «Sovereign» նաւերը: Այս նաւերը մէկը անգլիացիք համարու են աշխարհի ամենամեծ նաւը:

ԼՕՆԻՍՆ, 15 փետրվարի: Չիլից հաղորդում են, որ ապստամբները պաշարեցին իվիլիվէ քաղաքը և սկսեցին կոտորել և թալանել բնակիչներին. աղգաբնակիչները դիմադրեց առաջակիցներին. կռիւ սկսվեց և ապստամբները 173 հոգի սպանվեցան, միայն յայտնի չէ թէ ով մնաց յաղթող:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 15 փետրվարի: Պատգամաւորները ժողովն ընդունեց այն օրինակով, որով միանգամայն արգելվում է գաղթել դէպի Միացեալ Նահանգները դատաւարներ և ինքնարկածներին և աշխատանքի անընդունակներին:

ՊԱՐԻՉ, 15 փետրվարի: Գերմանական այլի կայսրուհին այսօր առաւօտ իր աղջկայ հետ ուղևորվեց Բուլոն: Երկաթուղու կայարանում ոչ մի իշխանական ցոյց չեղաւ, ընդհակառակն, ամբողջ շատերը քաղաքավարութեամբ ողջունում էին կայսրուհուն:

ԲԵՐԼԻՆ, 15 փետրվարի: Էլզաս-Լոթարինգիայի վերադարձին հրամայված է անցադրական կանոնները խիստ կիցալով գործադրել այն ֆրանսիացիների վերաբերմամբ, որոնք դալիս են այդ նահանգները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 փետրվարի: Բերլինում կաղմված է բերդական մեծ ֆիրմաների մի յանձնաժողով՝ Մոսկվայի միջազգային ցուցահանդիսին մասնակցելու համար: Յանձնաժողովի պատուաւոր նախագահ է ընտրված բերդական արդիւնաբերութեան և առևտրի մինիստրը:

ԲԵՂԳՐԱԴ, 16 փետրվարի: Այստեղի կառավարութիւնը ձերբակալեց ուսուցիչի մի քանի վագոններ, որոնք ուղարկվում էին Աւստրիայից Բուդապէս շարքի անունով:

ՊԱՐԻՉ, 16 փետրվարի: Հալախի գործակալութիւնը հաղորդում է, որ ֆրանսիական կառավարութիւնը ոչ մի ներգործութիւն չէ ունեցել ֆրանսիական նկարիչների վրա Բերլինի պատկերահանութիւն չը մասնակցելու հարցում:

ԲՈՒԴԱՊԵՍՏ, 16 փետրվարի: Սինատի վրձաւ պատճառով, որով աղգային լուսաւորութեան վերաբերմամբ օրէնսդրութեան քննութիւնը դադարեցվում է, մինիստրութիւնը հրաժարական տուեց:

ԲԵՂԳՐԱԴ, 16 փետրվարի: Աւստրիայից Բուդապէս ուղարկված ուսուցիչը լցված չէին, այդ պատճառով նրանց ներմուծութիւնը թույլատրվեց:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 16 փետրվարի: Սենատն ընդունեց դաշմանութեան վերաբերեալ բոլոր հետեւեալ խմբագրութեամբ՝ ներկայացուցիչների ժողովին հաստատած օրէնսդրութիւնը արգելում է գաղթականութիւնն այն անձանց, որոնք օգնութիւն են ստանում և նրանց, որոնք հաւանօրէն կը ծանրաբեռնեն տեղական աղգաբնակիչները և բաղմունքներն հետադիմներին:

ԼՕՆԻՍՆ, 16 փետրվարի: Բոմբէյց հեռագրում են, որ Մեծ Խաչմաներ Ալէքսանդր և Մերգէ Միխայլովիչներն այսօր Բինգալար հասան, գնալով Միսսար, ուր նրանք ուղևորվում են վայրենի գաղաններ որսալու համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 փետրվարի: «Journal de St. Pétersbourg» լրագիրն ասում է, որ Պարիզում պատահած անախտի գէպը՝ ֆրանսիական նը-

կարիչների մերժումը Բերլինի պատկերահանութիւնն մասնակցելու, — թեթիւ ստուեր գցեց ֆրանսիայի և Գերմանիայի փոխադարձ յարաբերութիւնները վրա: Լրագիրը մի և նոյն ժամանակ յայտ է յայտնում, որ երկու կողմն էլ կաշխատեն մուսացնել տալ այդ դէպքը:

ԲԵՐԼԻՆ, 17 փետրվարի: «Nordd. Algem. Zeitung» լրագիրը մասնաւոր է անում այն բանի վրա, որ ամբողջ գերմանական մամուլի միաբերան կարծիքները՝ ֆրանսիական նկարիչների Բերլինի պատկերահանութիւնն մասնակցելուց հրաժարվելու առիթով, գրաւական են այն բանի, որ պատահած դէպքում, եթէ աղգութիւնը ստիպված կը լինի պաշտպանել իր արժանաւորութիւնը, այն ժամանակ բոլոր գերմանացիները միանալով մէկ կը դառնան, առաջնորդվելով մէկ ընդհանուր հայրենիքի դադարաւարտ: Բնականաբար զինուորական բնութեւր մասին վիճաբանութիւնների ժամանակ, կայսերական կանցլէր յայտարարեց. «մենք անում ենք ամենը, ինչ կարող ենք, որպէս զի մեր խիղճը մաքուր լինի, բայց կամենում ենք նոյնպէս, որ մեր բազուկը զօրեղ լինի, եթէ, Աստուած մի արասցէ, այդ կը պահանջին հանգամանքները»:

ՊԱՐԻՉ, 17 փետրվարի: Ֆրանս-գերմանական դէպքի առիթով «Temps» լրագիրն ասում է, որ վիճելն անօգուտ է, բայց պատահածը պետք է խրատ լինի ապագայի համար: Լրագիրը ցուում է որ հասարակական կարծիքը Պարիզի նկարիչներին ազատութիւն չը տուեց գնալ Բերլին, եթէ նրանք այդ ցանկանում էին: Մաքեի անհայտ տրամադրութիւնը վտանգաւոր է, երբ գործը միջազգային խնդրի մասին է: Առհասարակ Պարիզի լրագիրները տրամադրութիւնը հանգիստ է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 փետրվարի: «Новости» լրագիրը ասել է, որ ռուս նկարիչներից շատերն ընդունել են Բերլինի պատկերահանութիւնն մասնակցելու հրաւերը և որ ռուսաց բաժինը խոտանում է հետաքրքիր լինել թէ քանակութեամբ և թէ էկզոցիտներին յատկութեամբ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ		Փետրվարի 15-ին	
Լոնդոնի վրա	10 ֆունտ արծէ . .	85	10 Կ.
Բերլինի վրա	100 մարկ . . .	41	75
Փարիզի վրա	100 ֆրանկ . . .	33	70
Ուսիլ	արծէ . . .	6	87
Մարսային կուպոններ . . .		137	50
Արծաթ		1	06
Բորսային դիվիդենդներ . . .	3 3/4 և 5 0/0	104	—
Պէս. բանկի 5 1/2 տոմս . . .		2-րդ	102
— — — — —		3-րդ	102
— — — — —		4-րդ	102
— — — — —		5-րդ	102
— — — — —		6-րդ	102
6 0/0 ռուսկայ ընդամ		146	25
4 0/0 ռուսկայ փոխառութիւն . . .		—	—
Արեւելեան 5 1/2 փոխառ. 1-ին շրջ. .		102	75
— — — — —		2-րդ	102
— — — — —		3-րդ	103
Ներքին 5 0/0 առաջին փոխառութ. .		237	—
— — — — —		228	—
Պետական. երկաթուղային ընդամ .		104	62
5 1/2 0/0 ընդամ		102	12
4 0/0 ներքին փոխառութիւն		95	50
5 0/0 զբառ. թղթ. աշն. կալ. բանկի .		102	50
5 1/2 0/0 վկայակ. դուր. հող. բանկի .		104	50
4 1/2 0/0 զբառական թղթեր կալուած .		—	—
— — — — —		140	12
— — — — —		102	—
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ .		101	25
Ընկերութեան օրէկոյցայիններ . .		100	50
Մոսկվայի քաղաք. օրէկոյցայիններ .		101	62
Օղէտային		97	12
Թիֆլիսի		102	25
— — — — —		102	25
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է:			

Խմբագիր-հրատարակող՝ ԳԻՒԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՄԻ ՄԱՔՈՒՐ ՍԵՆՆԱԿ փարձով է տրվում, Օրբէլիանովսկի փողոցում, տուն № 9, Գարախանովի: 2—2

ԵԼԵԿՏՐՈՆ		ԳԱԶԱՅԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ	
Այժի հասցենը տարածութեան վրա.	ԳԼԵԲՈՎ Էդարյանների	Օտոտո սխառնայի, որոնք իրանք իրանց են ուղղում ու օժ. փում:	
ՏԵԼԵՖՈՆՆԵՐԻ ՍԱՐԲԵԼԸ.	ԲՈՒՏՈՎ (Գոնի վրա)	Գաղի համար — անուխից,	
Էլեկտրական նշաններ.	ՄԵԾ Սաղոյալայ փողոց, 24	— — — — — նաւթից,	
ԶԱՆԳԱԿՆԵՐ	— — — — —	— — — — — անտրացիտից,	
ԳԱՎԱՆՈՊԼԱՍՏԻԿԱ.	— — — — —	— — — — — կէրօսինից	
Էլեկտրոլիզ.	— — — — —	1/2-ից մինչե 120 ձիււ ոյժի:	
Ախտուշտութիւն, Էլեմենտներ,	РОСТОВЪ (на Дону)	Շոգեմեքենաներ մեծ արագութեամբ.	
ՇԱՆՔԱՐԳԵԼՆԵՐ.	БР. ГЛѢБОВЫ	9—100 (Է. 2.)	
Նախահաշիւներ և ծրագիրներ ձրեարար.	Большая Садовая, 24.		

Տիկին Թագուհի և օրդը նրա՝ պ. պ. Արշակ և Անդրէաս ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆՆԵՐԸ և Թիկին Մարիամ ՄՆԱՑԱԿԱՆՆԵՐՑ արտի ցուով յայտնելով՝ առաջինը իր մօր և վերջինները իրանց մեծ մօր ԵՂԻՍԱԲԵԹ ԱՆԴՐԵԱՍԵԱՆՆԵՐԻ մահը, խնդրում են աղգակներին և ծանօթներին ներկայ լինել հանգուցեալի յուղարկաւորութեան հանդիսին, սեփական անից (Սիւնի փողոց № 5), դէպի ՆՈՐԱՇԷՆԻ սուրբ Աստուածածնի եկեղեցին, այսօր, փետրվարի 19-ին, ժամը 10-ին:

1—1

Մի պատուաւոր ԲՆՏԱՆԻՔ կամենում է իր մօտ պահել զիշերօթիկ մանուկներ՝ աշակերտներ կամ աշակերտուհիներ: Ընտանիքի զաւակները՝ դուստրը և օրդին, որոնք ուսանում են զինապետներում, առաջինը 8-օրդ, իսկ երկրորդ 6-օրդ դաստանէլում, կարող են պատրաստել աշակերտներին ուսուցնարանների ստորին դաստանների համար և թղթերի հետ կրկնութիւններ անել, նմանապէս պարագիւ նրանց հետ և հայոց լեզուից: Հասցէն հարցնել «Մշակի» և «Աղբիւրի» խմբագրատներում:

2—10

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽԵԴԻՐՆԵՐ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱԿԵԱՆՑԻ

Ման առաջին, ՀԱՍ ՈՒ ԶԸՀԱՍ

Ման երկրորդ ԼՈՒԾՈՒՄՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

Գերապատիւ եպիսկոպոսի այս աշխատութեան մէջ հետազօտված է՝ 1) Ամուսնութեան խորհուրդը և նրա մասին կանոնադրութիւնը հիմնադրութեան ժամանակներում 2) նոյնը քրիստոնեայ եկեղեցու մէջ: Այդ ընդհանուր տեսութիւնից յետոյ՝ հեղինակը զլրաւոր և միակ նպատակն է ցոյց տալ հայոց եկեղեցու կանոնադրութիւնը ամուսնական խնդիրների վրա:

Գիրքը ծախվում է Թիֆլիսի Կենտրոնական գրաւաճառանոցում: Գինը, առանց ճանապարհածախի, 1 ռուբլի:

4—7

ԻԳԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻԱՑԻ 8-րդ ԴԱՍԱՏԱՆ ՄԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՂԻ ցանկանում է զատել ունենալ. կարող է պատրաստել զինապետների ստորին դասարանների համար, մինչև 4-րդ, նոյն դասարանների. թոյլ աշակերտուհիների հետ կարող է կրկնողութիւններ անել, համաձայն է պարագիւ և հայոց լեզուից: Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատներում:

4—5

UNE FRANÇAISE DÉSIRE UNE PLACE DE GOUVERNANTE, OU DES LEÇONS.

ФРАНЦУЖЕНКА желает имѣть мѣсто гувернантки или уроки.

АДРЕСЪ: Лорисъ-Меликовская (Почтовая) улица, магазинъ ДУБЕЛИРА, гравёрное заведение, или РЕДАКЦІЯ ГАЗЕТЫ «МПАКЪ».

ՄԻ ՖՐԱՆՍՈՒԶԻ ցանկանում է տան վարժուհու (զուգէրնանկայի) պաշտօն, կամ զատել ունենալ:

ՀԱՍՑԵՆ. Պօստի փողոց, ԴՈՒԲԵԼԻՐԻ մագազին:

3—3

ՅԱՆԶՆՎԱԾ Է ՄԱՄՈՒԼԻՆ

«Հին ՀԱՅՈՑ ՏԱՂԱԶԱՓԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏՐ, ԲՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Ա. ԲԱԶԱՐԵԱՆ»

Այս գիրքը՝ որ 1889 թուականին առաջարկված էր Կ. Պօլիսի իզմիրեան-մրցանաւ կարաշխութեան յանձնաժողովին ի քննութիւն, այժմ տպագրվում է նորանոր յաւելուածով և ծանօթութեամբ: Գինն է 50 կօպ:

Գրադարան-քննիչքարանները ստանում են ձրի, եթէ վաղօրօք հաղորդեն իրանց հասցէն ուղարկելով և ճանապարհածախս:

Գիմել. Шуша, Аветису Багатурянц.

2—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Շոգեմեքենայի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻՑ դէպի ԲԱՐՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած

ԵՒ ՓՈՒՍԿԱՐՁ

Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պօլիս:

ԲԱՐՈՒՄԻՑ ՇՈԳԵՄԵՔԵՆԵՐ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 30 յունվարի (11 փետրվարի) շոգեմեքենա ՄԻԿԱՍԻ նաւապետ ԲՕՇԵԼ

— 13/25 փետրվարի	— ԱՆԱՏՈԼԻԱ	— ԳԱՐՐԻԳ
— 27 փետրվարի (11 մարտի)	— ՄԻՆԳՐԵԼԻԱ	— ԺԻԲՈՒԷՆ
— 13/25 մարտի	— ՄԻԿԱՍԻ	— ԲՕՇԵԼ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՄԵՔԵՆԵՐ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ: Ցօմանկները գնորդ ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ իսկական քից պակեցրած են:

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճն զրմել ընկերութեան ագէնտներին. ԲԱՐՈՒՄԻՍՍ պ. Գարանիսին, Նաբերէժնայա, ԹԻՖԼԻՍԻՍՈՒՄ պ. Վիկտոր ԴԱՐԵՆՈՒՆ, ՄԻՋԼԻՆ-փողոցում, նախկին գեներալ Տէր-Ասատուրովի տանը, ԲԱՐՈՒՄԻՍՍ, Սամսոն Գիլգարովին, Կօլիւրիակիսկայա հրապարակ, և ՆՕՎՕՐՈՍԻԹՍԿԻՍՍ պ. Լուի Բընօին:

9—10 (Է. 2.)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

MESSAGERIES MARITIMES

(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԻՍՆԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 22 փետրվարի (6 մարտի) դուրս կը գնայ ԲԱՐՈՒՄԻՑ TAMISE (ՏԱՄԻՍԶ) շոգեմեքենա, նաւապետ CHARVET (ՇԱՐՎԷ) դէպի Կ. Պօլիս, Մարսել, Հալիք, Լօնդօն, մտնելով և միջանկեալ նաւահանգստները:

Ագէնտները՝ ԲԱՐՈՒՄԻՍՍ պ. Գ. ԷՍՍԷՆԺԵՐ, ԹԻՖԼԻՍԻՍՈՒՄ՝ ԳԵՐԻԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱՐՈՒՄԻ մէջ՝ ԳՕԼԻԼՈՒՍԶ:

2—2